

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

Ստուգաթերթ N 34

Ջրի հավաքում, մշակում և բաշխում

(ՏԳՏԴ ծածկագիր՝ 36.00.0)

_____ (տեսչության տարածքային մարմնի անվանումը)

_____ (գտնվելու վայրը)

_____ (հեռախոսահամարը)

_____ (ստուգող անձի պաշտոնը)

_____ (ազգանունը, անունը, հայրանունը)

_____ (ստուգող անձի պաշտոնը)

_____ (ազգանունը, անունը, հայրանունը)

_____ (ստուգող անձի պաշտոնը)

_____ (ազգանունը, անունը, հայրանունը)

Ստուգման սկիզբը (ամսաթիվը) _____ ավարտը _____

_____ (տնտեսավարող սուբյեկտի անվանումը)

_____ (ՀՎՀՀ-ն)

_____ (տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը)

_____ (հեռախոսահամարը)

_____ (տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ լիազորված անձի ազգանունը, անունը, հայրանունը)

_____ (հեռախոսահամարը)

Ստուգման հանձնարարագիր _____ ում կողմից _____ երբ է տրված _____

Ստուգման նպատակը /Ընդգրկված հարցերի համարներ _____

	Հարց	այո	ոչ	չ/պ	կշիռ	հղում	Ստուգման մեթոդ	Մեկնաբանություն
1.	Ջրամատակարարման համակարգի աղբյուրի /մակերեսային և ստորգետնյա/ ջրառի կառույցները տեղակայված են արդյունաբերական օբյեկտների և բնակելի տարածքներից դուրս:				3	Հղում 1, կետ 2.2.1.1	տեսողական	
2.	Ջրամատակարարման աղբյուրների /մակերեսային և ստորգետնյա/ սանիտարական պահպանման /այսուհետ՝ սան.պահպանման/ առաջին /խիստ ռեժիմի/ գոտու տարածքում բացակայում է բոլոր տեսակի շինարարական աշխատանքները, որոնք չունեն անմիջական կապ ջրմուղի կառույցների շահագործման, ընդլայնման, վերակառուցման հետ, այդ թվում՝					Հղում 1, կետ 3.2.1.2	տեսողական	
2.1	տարբեր նշանակության խողովակաշարերի անցկացումը				3			
2.2	բնակելի և տնտեսակենցաղային շենքերի տեղակայումը,				3			
2.3	մարդկանց բնակվելը				3			
2.4	թունաքիմիկատների և պարարտանյութերի օգտագործումը				3			
3.	Ապահովվում է ջրամատակարարման ստորգետնյա աղբյուրի ջրառի կառույցների սան.պահպանման առաջին գոտու սահմանները՝ ջրառից 30 մ ոչ պակաս հեռավորության վրա՝ պաշտպանված ստորերկրյա ջրերի օգտագործման դեպքում, ջրառից ոչ պակաս 50 մ՝ ոչ բավարար պաշտպանված ստորերկրյա ջրերի օգտագործման դեպքում: նշում 1				3	Հղում 1, կետ 2.2.1.1, 2.2.1.2, 2.2.1.3,	տեսողական	
4.	Ունեն ջրամատակարարման ստորգետնյա աղբյուրի ջրառի կառույցների սան.պահպանման երկրորդ և երրորդ գոտիների սահմանների որոշման նախագծեր: նշում 2				1	Հղում 1, կետ 1.9		
5.	Ջրառի /մակերեսային և ստորգետնյա աղբյուրների/ կառույցների սան.պահպանման առաջին գոտու տարածքը պլանավորված է մակերեսային արտահոսքերի դրա սահմաններից դուրս հեռացման համար:				2	Հղում 1, կետ 3.2.1.1	տեսողական	
6.	Ջրառի կառույցների /մակերեսային և ստորգետնյա աղբյուրների/ սան.պահպանման առաջին գոտու տարածքը պարսպված է:				3	Հղում 1, կետ 3.2.1.1	տեսողական	
7.	Ջրառի կառույցների /մակերեսային և ստորգետնյա աղբյուրների/ սան.պահպանման առաջին գոտու տարածքը ապահովված է պահպանությունով:				3	Հղում 1, կետ 3.2.1.1	տեսողական	
8.	Ջրառի կառույցների /ստորգետնյա և մակերեսային աղբյուրից աղբյուրների/ կեղտաջրերի հեռացումը.					Հղում 1, կետ 3.2.1.3	տեսողական	

8.1	սան. պահպանման առաջին գոտու շենքերը կոյուղացված են կեղտաջրերի հեռացումով մոտակա կոյուղու համակարգ:				1			
8.2	կամ ունեն տեղական կեղտաջրերի մաքրման կայաններ:				1			
8.3	կեղտաջրերի մաքրման կայանները գտնվում են սան.պահպանման առաջին գոտուց դուրս:				1			
8.4	Կոյուղու բացակայության ժամանակ կազմակերպված են ջրանթափանց ընդունիչներ, որոնք տեղակայվում են այնպիսի տեղերում, որ բացառի կեղտաջրերի հեռացման ժամանակ սանիտարական պահպանման առաջին գոտու տարածքի աղտոտումը:				1			
9.	Ջրառի կառույցների սան.պահպանման առաջին գոտում տեղակայված ջրնուղի կառույցները սարքավորված են այնպես, որ բացառվի խմելու ջրի աղտոտումը հորատանցքերի գլխամասերի և ելանցքերի, ջրամբարների դիտահորերի և լցման խողովակների, պոմպերի լցման սարքավորումների միջոցով:				3	Հղում 1, Կետ 3.2.1.4	տեսողական	
10.	Ստորերկրյա ջրամատակարարման աղբյուրի սան.պահպանման երկրորդ և երրորդ գոտիներում չկան ջրատար հորիզոնների հնարավոր աղտոտման վտանգ ներկայացնող հին հորատանցքեր, եթե կան, ապա դրանք բացահայտված, տամպոնված կամ վերականգնված են: Ընդերքի օգտահանման, կարծր թափոնների ստորերկրյա պահեստավորման, ջրատար հորիզոնների մեջ գործած ջրերի մղման աշխատանքներ չեն կատարվում: Չկան ջրերի քիմիական աղտոտման վտանգ ներկայացնող՝ վառելիքաքսայուղային նյութերի, շլամապահեստարաններ, թունաքիմիկատների և պարարտանյութերի պահեստներ, արտադրական կեղտաջրերի կուտակիչների շլամապահեստարաններ և այլ օբյեկտներ:				3	Հղում 1, Կետ 3.2.2.1, 3.2.2.4	Տեսողական, սիտուցիոն պլան, գոտիների նախագիծ	
11.	Ստորերկրյա ջրամատակարարման աղբյուրի սան. պահպանման երկրորդ գոտում տեղակայված չեն՝ գերեզմանոցներ, անասնազերեզմանոցներ, ասենիզացիոն, զոման դաշտեր, գոմաղբի պահեստարաններ, սիլոսային առվափոսերի, անասնաթռչնաբուծական օբյեկտներ, ստորերկրյա ջրերի մանրէաբանական աղտոտման վտանգ ներկայացնող այլ օբյեկտներ:				3	Հղում 1, կետ 3.2.3.1	սիտուցիոն պլանով	
12.	Ապահովված է մակերեսային աղբյուրից ջրառի սան.պահպանման երրորդ գոտու սահմանները: նշում 2.				3	Հղում 1, կետ 2.3.3		
13.	Մակերեսային աղբյուրից ջրառի սանիտարական պահպանման առաջին գոտու սահմաններում՝					Հղում 1, կետ 3.3.1.2	տեսողական	

13.1	կեղտաջրեր չեն թափում,				3		
13.2	չեն լողանում,				3		
13.3	լվացք չեն անում				3		
13.4	անասուններին ջուր չեն խմեցնում				3		
13.5	չկան ջրօգտագործման այլ տեսակներ, որոնք ազդում են ջրի որակի վրա:				3		
14.	Ապահովված են մակերեսային աղբյուրից ջրառի սան. պահպանման առաջին գոտու սահմանները ջրահոսքերի համար՝					Հղում 1, Կետ 2.3.1.1	Գոտիների նախագիծ՝ սիտուցիոն պլան, Տեսող.
14.1	հոսանքով վերև -ջրառից 200 մ ոչ պակաս,				3		
14.2	հոսանքով ներքև -ջրառից 100 մ ոչ պակաս,				3		
14.3	ջրառին սահմանակից ափով -ջրի կտրման գծից 100 մ ոչ պակաս,				3		
14.4	ջրառին հակառակ ափով- ամբողջ տարածությունը և հակառակ ափը 50 մ ոչ պակաս լայնքով ջրի կտրման գծից:				3		
15.	Ապահովված են մակերեսային աղբյուրից ջրառի սան. պահպանման առաջին գոտու սահմանները ջրիավաքների համար (լճեր, ջրամբարներ) ջրառից ոչ պակաս 100 մ ջրատարածության բոլոր ուղղություններով և ջրառին սահմանակից ափով:				3	Հղում 1, Կետ 2.3.1.1	Գոտիների նախագիծ և սիտուցիոն պլան, տեսողական
16.	Ապահովված են մակերեսային աղբյուրից ջրառի սան. պահպանման երկրորդ գոտու սահմանները ջրահոսքերի համար՝					Հղում 1, Կետ 2.3.2.4, 2.3.2.5	Գոտիների նախագիծ, տեսողական
16.1	Հոսանքով վերև՝ մանրէներից ինքնամաքրման նպատակով, ջրահոսքերի երկրորդ գոտու սահմանը հեռացվում է ջրառից հոսանքով վերև այնքան, որ հիմնական ջրհոսքի վազքի ժամանակը ջրի ծախսի 95% ապահովության դեպքում լինի 5 օրից ոչ պակաս:				1		Հաշվարկ, Գոտիների նախագիծ
16.2	Հոսքով ներքև՝ ջրառից 250 մ ոչ պակաս:				1		
16.3	Ջրի կտրումից սանիտարական պահպանման երկրորդ գոտու եզրային սահմանները՝ հարթ ռելիեֆի դեպքում -500 մ ոչ պակաս, տեղանքի լեռնային ռելիեֆի դեպքում -750 մ ոչ պակաս:				1		
17.	Ապահովված են մակերեսային աղբյուրից ջրառի սան.պահպանման երկրորդ գոտու սահմանները ջրիավաքների (լճեր, ջրամբարներ)				3	Հղում 1, կետ 2.3.2	Գոտիների նախագիծ,

	համար՝ ջրառից ջրատարածքի բոլոր ուղղություններով 3 կմ տարածության վրա:						տեսողական	
18.	Մակերեսային ջրամատակարարման աղբյուրի սան.պահպանման երկրորդ և երրորդ գոտիներում չկան ջրերի քիմիական աղտոտման վտանգ ներկայացնող վառելիքաքսայուղային նյութերի պահեստներ, թունաքիմիկատների և պարարտանյութերի պահեստներ, արտադրական կեղտաջրերի կուտակիչների շլամապահեստարաններ և այլ օբյեկտներ:				3	Հղում 1, Կետ 3.3.3	Գոտիների նախագիծ, տեսողական	
19.	Մակերեսային ջրամատակարարման աղբյուրի սան.պահպանման երկրորդ և երրորդ գոտիներում տեղակայված չեն՝ գերեզմանոցներ, անասնազերեզմանոցներ, ասենիզացիոն, զոման դաշտեր, գոմաղբի պահեստարաններ, սիլոսային առվափոսերի, անասնաթոչնաբուծական օբյեկտներ, ստորերկրյա ջրերի մանրէաբանական աղտոտման վտանգ ներկայացնող այլ օբյեկտներ: 500 մ ոչ պակաս լայնության ավամերձ շերտագծի սահմաններում արոտավայրեր տեղակայված չեն, ջրի որակի վատթարացմանը բերող անտառների, հողամասերի և ջրամբարի օգտագործում չկա:				3	Հղում 1, Կետ 3.3.3	Գոտիների նախագիծ, տեսողական	
20.	Ապահովված են ջրառից դուրս տեղակայված ջրմուղու կառույցների սան.պահպանման առաջին գոտու սահմանը՝ նշում 3.					Հղում 1, Կետ 2.4.2	տեսողական	
20.1	պահեստային և կարգավորող տարողությունների, ֆիլտրների և կոնտակտային պարզարանների պատերից -30 մ ոչ պակաս,				3			
20.2	ջրաճնշումային աշտարակներից 10մ ոչ պակաս,				3			
20.3	մնացած շենքերից (նստեցման ավազաններ, ռեագենտային տնտեսություն, քլորի պահեստ, պոմպակայաններ և այլն) -15 մ ոչ պակաս:				3			
21.	Սանիտարապահպանական շերտագծի լայնությունը ջրատարի եզրային գծերի երկու կողմից ապահովված է՝ ա) գրունտային ջրերի բացակայության ժամանակ՝ -մինչև 1000 մմ ջրատարի տրամագծի դեպքում-10 մ ոչ պակաս, -1000 մմ ավել տրամագծի դեպքում -50 մ ոչ պակաս:					Հղում 1, կետ 2.4.4	Ջրատարի նախագիծ՝ սիտուցիոն պլանում կամ տեղանքի զննում	
22.	Ջրամատակարարման համակարգով տրվող խմելու ջրի որակը համապատասխանում է նորմերին. Նշում 4. Որոշիչ					Հղում 2, կետ 3.3	լաբորատոր հետազոտություն	

22.1	մանրէաբանական ցուցանիշներով				3		
22.2	մակաբուժաբանական ցուցանիշներով				3		
23.	Ջրամատակարարման համակարգով տրվող խմելու ջրի որակը համապատասխանում է նորմերին՝ ըստ քիմիական կազմի, այդ թվում՝					Հղում 2, կետ 3.4.	լաբորատոր հետազոտություն
23.1	ընդհանրացված ցուցանիշներով և բնական ջրերում հաճախ հանդիպող վնասակար քիմիական նյութերի, ինչպես նաև համատարած նշանակություն ստացած անտրոպոգեն ծագումով նյութերի պարունակության				3	Հղում 2, կետ 3.4.1. (հավելված 2)	
23.2	ջրամատակարարման համակարգում ջրի մշակման ժամանակ ներմուծված և առաջացած վնասակար քիմիական նյութերի պարունակության				3	Հղում 2, կետ 3.4.2. (հավելված 3)	
23.3	մարդու տնտեսական գործունեության ընթացքում առաջացած և ջրամատակարարման աղբյուրներ ներթափանցած վնասակար քիմիական նյութերի պարունակության: Նշում 5.				3	Հղում 2, կետ 3.4.3. հավելված 10	
24.	Խմելու ջուրը ունի բարենպաստ զգայորոշական հատկություններ: Նշում 6.				2	Հղում 2, կետ 3.6, հավելված 4	լաբորատոր հետազոտություն
25.	Ապահովված է ջրամատակարարման համակարգով տրվող խմելու ջրի ճառագայթային անվտանգությունը՝ ընդհանուր α և β ակտիվության ցուցանիշներով: Նշում 7.				3	Հղում 2, կետ 3.6, հավելված 5	լաբորատոր հետազոտություն
26.	Եթե ջրամատակարարման համակարգի կառույցներում կամ օբյեկտներում առաջանում են վթարային իրավիճակներ կամ տեխնիկական շեղումներ, որոնք բերում են կամ կարող են բերել խմելու ջրի որակի կամ բնակչության ջրամատակարարման պայմանների վատթարացմանը, կազմակերպությունը, որն իրականացնում է ջրամատակարարման համակարգի շահագործումը, անհապաղ միջոցներ է ձեռնարկել այդ շեղումների վերացման ուղղությամբ:				3	Հղում 2, կետ 2.3.	փաստաթղթային
27.	Եթե ջրամատակարարման համակարգի կառույցներում կամ օբյեկտներում առաջանում են վթարային իրավիճակներ կամ տեխնիկական շեղումներ, որոնք բերում են կամ կարող են բերել խմելու ջրի որակի կամ բնակչության ջրամատակարարման պայմանների վատթարացմանը, կազմակերպությունը, որն				3	Հղում 2, կետ 2.3.	փաստաթղթային

	իրականացնում է ջրամատակարարման համակարգի շահագործումը, տեղյակ է պահել այդ մասին տարածքային հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության կենտրոնին:						
28.	Խմելու ջրի որակի նկատմամբ շահագործումն իրականացնող կազմակերպության կողմից իրականացվում է արտադրական հսկողություն: Նշում 8.			3	Հղում 2, կետ 4.2.	փաստաթղթային	
29.	Ջրադի տեղերում խմելու ջրի լաբորատոր հետազոտությունների նմուշների քանակը և հետազոտությունների պարբերականությունը համապատասխանում է սահմանված պահանջներին: Նշում 9.				Հղում 2, կետ 4.3, հավելված 6	փաստաթղթային	
29.1	մանրէաբանական ցուցանիշներով			3			
29.2	մակաբուժաբանական ցուցանիշներով			3			
29.3	սան.քիմիական /ընդհանրացված ցուցանիշներ, անօրգանական և օրգանական նյութեր/ ցուցանիշներով			3			
30.	Մինչև ջրաբաշխիչ ցանց մտնելը խմելու ջրի լաբորատոր հետազոտությունների նմուշների քանակը և պարբերականությունը համապատասխանում է սահմանված պահանջներին: Նշում 9.				Հղում 2, կետ 4.4, հավելված 7	փաստաթղթային	
30.1	մանրէաբանական ցուցանիշներով			3			
30.2	մակաբուժաբանական ցուցանիշներով			3			
30.3	սան.քիմիական /ընդհանրացված ցուցանիշներ անօրգանական և օրգանական նյութեր, ջրապատրաստման տեխնոլոգիայի հետ կապված ցուցանիշներ/:			2			
31.	Խմելու ջրի որակի արտադրական հսկողությունը ներառում է խմելու ջրի ճառագայթային անվտանգությունը որոշումը ռադիոլոգիական ցուցանիշներով /ընդհանուր α և β ակտիվության/				Հղում 2, կետ 4.3, 4.4, հավելված 6 և 7	փաստաթղթային	
31.1	ջրադի տեղերում			3			
31.2	մինչև ջրաբաշխիչ ցանց մտնելը նմուշառեման կետերում:			1			
32.	Ջրամատակարարման բաշխիչ ցանցում խմելու ջրի արտադրական հսկողությունը ընդգրկում է մանրէաբանական ցուցանիշներով հետազոտություններ:			3	Հղում 2, կետ 4.5, հավելված 8	փաստաթղթային	
33.	Ջրամատակարարման բաշխիչ ցանցում խմելու ջրի արտադրական հսկողությունը մանրէաբանական ցուցանիշներով կատարվել է սահմանված հաճախականությամբ: Նշում 10.			1	Հղում 2, կետ 4.5, հավելված 8	փաստաթղթային	
34.	Ջրամատակարարման բաշխիչ ցանցում խմելու ջրի արտադրական			3	Հղում 2,	փաստաթղթային	

	հսկողությունը ընդգրկում է զգայորոշական ցուցանիշներով հետազոտություններ:					կետ 4.5, հավելված 8	ային	
35.	Ջրամատակարարման բաշխիչ ցանցում խմելու ջրի արտադրական հսկողությունը զգայորոշական ցուցանիշներով կատարվել է սահմանված հաճախականությամբ: Նշում 10.				1	Հղում 2, կետ 4.5, հավելված 8	փաստաթղթային	
36.	Մանրէաբանական ցուցանիշներով նորմատիվների գերազանցումը չի արձանագրվել ջրամատակարարման արտաքին և ներքին ցանցի ջրաբաշխիչ կետերից վերցված նմուշների 95 տոկոսում, 12 ամսվա ընթացքում, 100-ից ոչ պակաս հետազոտված նմուշների քանակի դեպքում, տարվա ընթացքում: Որոշիչ				3	Հղում 2, կետ 3.3	Փաստաթղթային, հաշվարկ	
37.	Մանրէաբանական ցուցանիշներով հետազոտման համար նմուշները վերցվում են նաև ցանցի վերանորոգումից կամ այլ տեխնիկական աշխատանքներ կատարելուց հետո:				3	Հղում 2, կետ 4.5, հավելված 8	փաստաթղթային	
38.	Զգայորոշման ցուցանիշներով հետազոտման համար նմուշները վերցվում են նաև ցանցի վերանորոգումից կամ այլ տեխնիկական աշխատանքներ կատարելուց հետո:				3	Հղում 2, կետ 4.5, հավելված 8	փաստաթղթային	
39.	Խմելու ջրի որակի արտադրական հսկողությունն իրականացնող կազմակերպությունը հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության տարածքային կենտրոնին անհապաղ տեղյակ է պահել ջրի լաբորատոր հետազոտության հիգիենիկ նորմերին չհամապատասխանող յուրաքանչյուր նմուշի վերաբերյալ:				3	Հղում 2, կետ 2.3	փաստաթղթային	
40.	Խմելու ջրի որակի արտադրական հսկողության ժամանակ մանրէաբանական հետազոտության համար վերցված յուրաքանչյուր նմուշում որոշվել է,					Հղում 2, կետ 3.3.1.	փաստաթղթային	
40.1	ջերմատուլերանտ կոլիֆորմ մանրէները				1			
40.2	ընդհանուր կոլիֆորմ մանրէները,				1			
40.3	մանրէների ընդհանուր քանակը:				1			
41.	Մակերեսային ջրի աղբյուրներից սնվող ջրամատակարարման համակարգերում մինչև ջրաբաշխիչ ցանց մտնելը կատարվում են նաև լյամբլյաների ցիստերի և կոլիֆագերի հետազոտություններ:				3	Հղում 2, կետ 3.3.1.	փաստաթղթային	
42.	Եթե խմելու ջրի նմուշում հայտնաբերվել են ջերմատուլերանտ կոլիֆորմ մանրէներ և/կամ ընդհանուր կոլիֆորմ մանրէներ և/կամ կոլիֆագեր, կատարվել է նրանց որոշում հրատապ վերցրած կրկնակի նմուշառնված ջրում:				3	Հղում 2, կետ 3.3.2.	փաստաթղթային	
43.	Այդ դեպքերում, միաժամանակ կատարվել է ջրի աղտոտվածության				3	Հղում 2,	փաստաթղթ	

	պատճառի հայտնաբերման համար քլորիդների, ամոնիումային ազոտի, նիտրիտների և նիտրատների որոշում:					կետ 3.3.2.	ային	
44.	Պարբերական բժշկական զննության ենթակա անձնակազմը ունի պարբերական բժշկական զննության գրքույկ Նշում 11.				3	Հղում 3	փաստաթղթային	
44.1	Բժշկական զննության գրքույկը համապատասխանում է պահանջվող ձևին				2	Հղում 3	փաստաթղթային	
44.2	Պահպանվում է բժշկական զննության հետազոտությունների ծավալը				3	Հղում 3	փաստաթղթային	
44.3	Պահպանվում է բժշկական զննության հետազոտությունների հաճախականությունը:				3	Հղում 3	փաստաթղթային	
45.	Արտադրական միջավայրի և աշխատանքային գործընթացի վնասակար գործոնների ազդեցությանը ենթարկվող աշխատողները /զոդողներ, քլորատորների, ջրահեռացման ցանցում աշխատողներ և այլն/ ենթարկվել են պարտադիր նախնական և պարբերական բժշկական զննության:				2	Հղում 4, կետ 4.1.4	փաստաթղթային	

Հղում 1. ՀՀ առողջապահության նախարարի 29.11.2002թ. N 803 հրամանով հաստատված «Խմելու-տնտեսական նշանակության ջրմուղների և ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման գոտիներ» N2-III-Ա2-2 սանիտարական նորմեր և կանոններ,

Հղում 2. Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ որակի հսկողություն» N2-III-Ա2-1 սանիտարական նորմեր և կանոններ

Հղում 3. ՀՀ կառավարության 2003թ. մարտի 27-ի «Առողջական վիճակի պարտադիր նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական բժշկական զննության կարգը, գործունեության ոլորտների, որոնցում զբաղված անձինք ենթակա են առողջական վիճակի պարտադիր բժշկական զննության և բժշկական զննության ծավալի ու հաճախականությունների ցանկը և անձնական սանիտարական (բժշկական) գրքույկի ու բժշկական զննության ենթակա անձանց անվանացանկի ձևերը հաստատելու մասին» թիվ 347-Ն որոշում

Հղում 4. ՀՀ առողջապահության նախարարի 15.08.05թ. N756-Ն հրամանով հաստատված «Աշխատանքի հիգիենիկ դասակարգումը ըստ արտադրական միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների, աշխատանքային գործընթացի ծանրության և լարվածության ցուցանիշների» N2.2-002-05 սանիտարական կանոններ և նորմեր

Նշում 1. Պաշտպանված ստորերկրյա ջրեր՝ ճնշումային և ոչ ճնշումային միջջերտային ջրերը, որոնք սանիտարական պահպանման բոլոր գոտիների սահմաններում ունեն համատարած ջրահենային ծածկ, որը բացառում է ոչ բավարար պաշտպանված այլ հորիզոններից տեղային սնման հնարավորությունը: Ոչ բավարար պաշտպանված ստորերկրյա ջրեր՝ գրունտային ջրեր, ճնշումային և ոչ ճնշումային միջջերտային ջրեր, որոնք սանիտարական պահպանման գոտու մակերեսում ունեն սնուցում ոչ բավարար պաշտպանված այլ հորիզոններից կամ անմիջական հիդրավլիկ կապի միջոցով բաց ջրամբարներ: Ստորերկրյա ջրառների խմբի սանիտարական պահպանման առաջին գոտու սահմանները անցնում են հեռավոր ջրառներից 30 մ և 50 մ ոչ պակաս հեռավորության վրա: Ստորերկրյա ջրերի պաշարների արհեստական համալրման դեպքում, ապահովված է ջրառների առաջին գոտու սահմանը ստորերկրյա ոչ բավարար պաշտպանված ջրամատակարարման աղբյուրի համար, ջրառից 50 մ ոչ պակաս և ինֆիլտրացիոն կառույցներից 100 մ ոչ պակաս հեռավորության վրա:

նշում 2. Երկրորդ և երրորդ գոտիների սահմանների որոշման ժամանակ հաշվի է առնել, որ ջրատար հորիզոնից դեպի ջրառ, ստորերկրյա ջրերի հոսքը կատարվում է միայն ջրառի սնման շրջանից, որի չափերը և ձևը պլանում կախված են՝ ջրառի տեսակից (առանձին ջրառներ, ջրառների խումբ և այլն), ջրառի չափից (ջրի ծախսը) և ստորերկրյա ջրերի մակարդակի իջեցումից, ջրատար շերտի հիդրոլոգիական առանձնահատկություններից և դրա սնման պայմաններից: Սանիտարական պահպանման երկրորդ և երրորդ գոտիները որոշվում են հիդրոդինամիկ հաշվարկներով, ելնելով այն պայմաններից, որ երկրորդ գոտու սահմանից դուրս ջրատար հորիզոն թափանցող մանրէաբանական աղտոտումը հասնում է մինչև ջրառ:

Մակերեսային ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման երրորդ գոտու սահմանները ջրահոսքի վրա, հոսքով վերև և ներքև համընկնում են երկրորդ գոտու սահմանների հետ: Եզրային սահմանները պետք է անցնեն ջրաբաժան գծերով 3-5 կմ սահմաններում, ներառյալ վտակները: Մակերեսային ջրաղբյուրի երրորդ գոտու սահմանները ջրահավաքների վրա լիովին համընկնում են երկրորդ գոտու սահմանների հետ:

նշում 3. Ջրառից դուրս տեղակայված ջրամատակարարման կառույցների սանիտարապահպանական գոտին կազմվում է առաջին գոտուց (խիստ ռեժիմի): Օբյեկտի տարածքում ջրամատակարարման կառույցների տեղակայման դեպքում վերոհիշյալ տարածությունները կարող են փոքրացվել, նվազագույնը մինչև 10 մ:

նշում 4. Յուրաքանչյուր նմուշում կատարվում է ջերմատուլերանտ կոլիֆորմ մանրէների, ընդհանուր կոլիֆորմ մանրէների, մանրէների ընդհանուր քանակի որոշում: Կոլիֆագերի հետազոտությունները կատարվում են միայն մակերեսային ջրի աղբյուրներից սնվող ջրամատակարարման համակարգերում մինչև ջրաբաշխիչ ցանց մտնելը:

ԽՄԵԼՈՒ ԶՐԻ ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՄԱԿԱՐՈՒԾԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՆՈՐՄԵՐ

Ցուցանիշներ	Չափման միավորներ	Նորմաներ
Ջերմատուլերանտ կոլիֆորմ մանրէներ 1/	100 մլ-ում մանրէների քանակ	Բացակայություն
Ընդհանուր կոլիֆորմ մանրէներ 2/	100 մլ-ում մանրէների քանակ	Բացակայություն
Մանրէների ընդհանուր քանակություն 2/	Գաղութներ առաջացնող մանրէների քանակը 1 մլ-ում	50-ից ոչ ավել
կոլիֆագեր 3/	Վահանակ առաջացնող միավորների (ՎԱՄ) քանակը 100 մլ-ում	Բացակայություն
Սուլֆիտվերականգնող կլոստրիդիաների սպորներ 4/	Սպորների քանակը 20 մլ-ում	Բացակայություն
Լյամբլաների ցիստեր 3/	Ցիստերի քանակը 50 մլ-ում	Բացակայություն

- 1/ Որոշման ժամանակ կատարվում է վերցված 100 մլ ջրի նմուշի եռանվազ հետազոտություն:
- 2/ Նորմատիվների գերազանցումը չի թույլատրվում ջրամատակարարման արտաքին և ներքին ցանցի ջրաբաշխիչ կետերից վերցված նմուշների 95 տոկոսում, 12 ամսվա ընթացքում, 100-ից ոչ պակաս հետազոտված նմուշների քանակի դեպքում, տարվա ընթացքում:
- 3/ Հետազոտությունները կատարվում են միայն մակերեսային ջրի աղբյուրներից սնվող ջրամատակարարման համակարգերում մինչև ջրաբաշխիչ ցանց մտնելը:
- 4/ Հետազոտությունը կատարվում է ջրի մշակման տեխնոլոգիական եղանակի արդյունավետության գնահատման ժամանակ:

նշում 5

ԸՆԴՀԱՆՐԱՑՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՎ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՋՐԵՐՈՒՄ ՀԱՃԱՆ ՀԱՆԴԻՊՈՂ ՎՆԱՍԱԿԱՐ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱՆՏՐՈՊՈԳԵՆ ԾԱԳՈՒՄՈՎ ՆՅՈՒԹԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԿՈՆՑԵՆՏՐԱՑԻԱՆԵՐԻ ՆՈՐՄԵՐԸ

Ցուցանիշներ	Չափման միավորներ	Նորմատիվներ սահմանային թույլատրելի կոնցենտրացիա (ՄԹԿ) ոչ ավել	Վնասակարության ցուցանիշ 1/	Վտանգավորության դաս
Ընդհանրացված ցուցանիշներ				
Ջրածնային ցուցանիշ	PH միավորներ	6-9 սահմաններում		
Ընդհանուր հանքայնացում (չոր մնացորդ)	մգ/լ	1000 (1500) ^{2/}		
Ընդհանուր կոշտություն	մմոլ/լ	7,0 (10) ^{2/}		
Պերմանգանատային օքսիդացում	մգ/լ	5.0		
Նավթամթերքներ, գումարային	մգ/լ	0,1		
Մակերեսային ակտիվ նյութեր (ՄԱՆ) անիոնաակտիվ	մգ/լ	0.5		
Ֆենոլային ինդեքս	մգ/լ	0.25		
Անօրգանական նյութեր				
Ալյումինիում (Al ³⁺)	մգ/լ	0.5	ս/թ	2
Բարիում (Ba ²⁺)	-/-	0.1	-/-	2
Բերիլիում (Be ²⁺)	-/-	0.0002	-/-	1
Բոր (B, գումարային)	-/-	0.5	-/-	2
Երկաթ (Fe, գումարային)	-/-	0.3 (1.0) ^{2/}	զգայ.	3
Կադմիում (Cd, գումարային)	-/-	0.001	ս.-թ.	2
Մանգան (Mn, գումարային)	-/-	0.1 (0.5) ^{2/}	զգայ.	3
Պղինձ (Cu, գումարային)	-/-	1.0	-/-	3
Մոլիբդեն (Mo, գումարային)	-/-	0.25	ս.-թ.	2
Արսեն (As, գումարային)	-/-	0.05	-/-	2
Նիկել (Ni, գումարային)	-/-	0.1	-/-	3
Նիտրատներ (ըստ NO ₃ ⁻)	-/-	45	զգայ.	3
Սնդիկ (Hg, գումարային)	-/-	0.0005	ս.-թ.	1
Կապար (Pb, գումարային)	-/-	0.03	-/-	2
Սելեն (Se, գումարային)	-/-	0.01	-/-	2
Ստրոնցիում (Sr ²⁺)	-/-	7.0	-/-	2
Սուլֆատներ (SO ₄ ²⁻)	-/-	500	զգաց.	4
Ֆտորիդներ (F ⁻)	-/-		-/-	
Կլիմայական շրջանների համար				
I և II	-/-	1.5	ս.-թ.	2
III	-/-	1.2	-/-	2

Քլորիդներ (Cl ⁻)	-/-	350	զգայ.	4
Քրոմ (Cr ⁶⁺)	-/-	0.05	ս. -թ.	3
Ցիանիդներ (CN ⁻)	-/-	0.035	-/-	2
Ցինկ (Zn ²⁺)	-/-	5.0	զգայ.	3
Օրգանական նյութեր				
γ - ՀՔՑՀ (լինդան)	-/-	0.002 _{3/}	ս. -թ.	1
ԴԴՏ (իզոմերների գումար)	-/-	0.002 _{3/}	-/-	2
2,4-Դ	-/-	0.03 _{3/}	-/-	2

1/ Նյութի վնասակարության լիմիտավորող հատկանիշը, որով սահմանված է նորմատիվը՝ «ս. -թ.» - սանիտարաթունաբանական, «զգայ.» -զգայորոշական:

2/ Փակագծերում նշված մեծությունը կարող է սահմանվել տարածքի գլխավոր պետական սանիտարական բժշկի որոշմամբ՝ ջրամատակարարման տվյալ համակարգի համար, ելնելով բնակավայրի սանիտարահամաճարակային իրավիճակից և օգտագործվող ջրապատրաստման տեխնոլոգիայից:

3/ Նորմատիվներն ընդունված են Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) առաջարկություններին համապատասխան:

Հավելված 3

ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԵՎ ԱՌԱՋԱՑՈՂ ՎՆԱՍԱԿԱՐ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԿՈՆՑԵՆՏՐԱՑԻԱՆԵՐԻ (ՍԹԿ/ ՆՈՐՄԵՐԸ

Ցուցանիշներ	Չափման միավորներ	Նորմեր սահմանային թույլատրելի կոնցենտրացիա (ՍԹԿ) ոչ ավել	Վնասակարության ցուցանիշ	Վտանգավորության դաս
Քլոր 1/				
-մնացորդային ազատ	մգ/լ	0.3-0.5 սահմաններում	զգայ.	3
-մնացորդային կապված	-/-	0.8-0.12 սահմաններում	-/-	3
քլորոֆորմ (ջրի քլորացման դեպքում)	-/-	0.2 2/	ս. -թ.	2
օզոն մնացորդային 3/	-/-	0.3	զգայ.	
ֆորմալդեհիդ (ջրի օզոնացման դեպքում)	-/-	0.05	ս. -թ.	2
պոլիակրիլամիդ	-/-	2.0	-/-	2
ակտիվացված սիլիկաթու (ըստ Si)	-/-	10	-/-	2
պոլիֆոսֆատներ (ըստ PO ₄ ³⁻)	-/-	3.5	զգայ.	3
այլումինիում և երկաթ պարունակող կոագուլյանտների մնացորդային քանակներ	-/-	նայել ցուցանիշներ «Ալյումինիում» երկաթ» աղ. 2		

Խմելու ջրի մշակման ժամանակ ջրամատակարարման և ջրի մշակման ժամանակ ջրամատակարարման համակարգ ներմուծվող և առաջացող վնասակար քիմիական նյութերի որոշումը կատարվում է հաշվի առնելով որ ազատ քլորով ջրի վարակազերծման դեպքում ջրի հետ դրա կոնտակտը պետք է լինի 30 րոպեից ոչ պակաս, կապված քլորով -60 րոպեից ոչ պակաս: Մնացորդային քլորի պարունակության հսկողությունն իրականացվում է մինչև ջրի ջրաբաշխիչ ցանց մղելը՝ այն համապատասխանում է հիգիենիկ նորմին՝ 0.3-0.5մգ/լ: Ջրում ազատ և կապված քլորի միաժամանակ առկայության դեպքում դրանց ընդհանուր կոնցենտրացիան չի գերազանցել 1,2 մգ/լ:

Մնացորդային օզոնի պարունակության հսկողությունն իրականացվում է խառնման խցիկից հետո, ապահովելով 12 րոպեից ոչ պակաս կոնտակտ:

խմելու ջրի քիմիական կազմի տարածաշրջանային առանձնահատկությունները, սահմանվում են անհատական յուրաքանչյուր ջրամատակարարման համակարգերի համար՝ ջրամատակարարման աղբյուրների ջրի քիմիական կազմի գնահատման արդյունքների, ինչպես նաև ջրամատակարարման համակարգի խմելու ջրի արտադրության տեխնոլոգիայի հիման վրա:

Ընդլայնված հետազոտություններ իրականացնելու համար ջրի քիմիական կազմը բնութագրող ցուցանիշների ընտրությունը կատարվում է ջրամատակարարման համակարգը շահագործող կազմակերպության կողմից ՊՀՀ տեսչության մարմինների համաձայնությամբ երկու փուլով:

Առաջին փուլում ջրամատակարարման համակարգը շահագործող կազմակերպությունը վերլուծում է ոչ պակաս, քան վերջին 3 տարվա ժամանակահատվածի հետևյալ փաստաթղթերը՝

- ջրառներից վերև ջրամատակարարման աղբյուրներ թափվող կեղտաջրերի ծավալների և կազմի մասին պետական վիճակագրական հաշվետվություններ և այլ պաշտոնական տվյալներ,
- բնության պահպանության, հիդրոմետ ծառայության, ջրային ռեսուրսների, երկրաբանական և ընդերքի օգտագործման մարմինների և այլ կազմակերպությունների ստորերկրյա, մակերեսային ջրերի և ջրամատակարարման համակարգի ջրի որակի վերաբերյալ իրականացվող մոնիտորինգի և արտադրական հսկողության տվյալները,
- հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության մարմինների ջրամատակարարման համակարգերում և բնակչության ջրօգտագործման տեղերում ջրի որակի հետազոտությունների արդյունքները,
- ջրահավաքման ավազանում (մակերեսային աղբյուրների համար) և սանիտարական պաշտպանական գոտու տարածքում (ստորգետնյա աղբյուրների համար) օգտագործվող ագրոքիմիկատների և պետիցիդների ծախսերի և տեսականու մասին տվյալներ: Կատարված վերլուծության հիման վրա կազմվում է նյութերի ցանկ, որոնք բնութագրում են ջրամատակարարման կոնկրետ աղբյուրի ջրի քիմիական կազմը և սույն սանիտարական կանոնների հավելված 10-ում ունեն հիգիենիկ նորմատիվներ:

2-րդ փուլում ջրամատակարարման համակարգը շահագործող կազմակերպության կողմից կատարվում են ջրի ընդլայնված լաբորատոր հետազոտություններ կազմված քիմիական նյութերի ցանկով, ինչպես նաև սույն սանիտարական կանոնների հավելված 2-ում նշված ցանկով:

Ջրի մշակման ռեագենտային եղանակներ օգտագործվող ջրամատակարարման համակարգերի համար, ընդլայնված հետազոտությունների կատարման ժամանակ մինչև ջրի մատակարարելը ջրաբաշխիչ ցանց, լրացուցիչ ներառվում են սույն սանիտարական կանոնների հավելված 3-ում նշված ցուցանիշները:

Ջրի ընդլայնված լաբորատոր հետազոտությունները կատարվում են մեկ տարվա ընթացքում ջրամատակարարման համակարգի ջրառի տեղերում, իսկ ջրի մշակման կամ տարբեր ջրառների ջրերի խառնման դեպքում նաև մինչև ջրաբաշխիչ ցանց մտնելը:

նշում 6. ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ԶԳԱՅՈՐՈՇԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՆՈՐՄԵՐ

Ցուցանիշներ	Չափման միավորներ	Նորմեր, ոչ ավելի
Հոտ	բալեր	2
Համ	-//-	2
Գունավորում	աստիճաններ	20 /35/ 1)
Պղտորություն	ՖՊՄ (ըստ ֆորմազինի) պղտորության միավոր կամ մգ/լ (ըստ կառլինի)	2.6 /35/ 1) 1.5 /2/ 1)

Հավելված 5

նշում 7. ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԵՐ

Ցուցանիշներ	Չափման միավորներ	Նորմեր	Վնասակարության ցուցանիշ
-------------	------------------	--------	-------------------------

Ընդհանուր α- ռադիոակտիվություն	Բկ/լ	0.1	ռադիաց.
Ընդհանուր β- ռադիոակտիվություն	Բկ/լ	1.0	-/-

նշում 8. Իրականացվում է ջրամատակարարման համակարգերը շահագործող կազմակերպությունների լաբորատորիաների կողմից կամ պայմանագրային կարգով խմելու ջրի որակի հետազոտություններ կատարելու իրավունք ունեցող (հավատարմագրված) այլ կազմակերպությունների լաբորատորիաների կողմից:

նշում 9. Հավելված 6
ՋՐԱՌԻ ՏԵՂԵՐՈՒՄ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՆՄՈՒՇՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Ցուցանիշների տեսակներ	Մեկ տարվա ընթացքում նմուշների քանակը, ոչ պակաս	
	Ստորգետնյա աղբյուրների համար	Մակերեսային աղբյուրների համար
Մանրէաբանական	4 (ըստ տարվա եղանակների)	12 (ամենամսյա)
Մակարուծական	չեն կատարվում	
զգայորոշման	4 (ըստ տարվա եղանակների)	12 (ամենամսյա)
ընդհանրացված ցուցանիշներ	-/-	-/-
անօրգանական և օրգանական նյութեր	1	4 (ըստ տարվա եղանակների)
Ռադիոլոգիական	1	1

Հավելված 7

ՄԻՆԶԵՎ ԲԱՇԽԻՉ ՑԱՆՑ ԽՄԵԼՈՒ ՋՐՈՒՄ ՈՐՈՇՎՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՎՈՂ ՆՄՈՒՇՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Ցուցանիշների տեսակներ	Մեկ տարվա ընթացքում նմուշների քանակը, ոչ պակաս				
	Ստորգետնյա աղբյուրների համար			Մակերեսային աղբյուրների համար	
	Տվյալ ջրահամակարգից ջրով ապահովող բնակչության թիվը, հազար մարդ				
	մինչև 20	20-100	100-ից բարձր	մինչև 100	100-ից բարձր
Մանրէաբանական	50 ^{1/}	150 ^{2/}	365 ^{3/}	365 ^{3/}	365 ^{3/}
Մակարուծական	չեն կատարվում			12 ^{4/}	12 ^{4/}
Չզայորոշման	50 ^{1/}	150 ^{2/}	365 ^{3/}	365 ^{3/}	365 ^{3/}
Ընդհանրացված ցուցանիշներ	4 ^{4/}	6 ^{5/}	12 ^{6/}	12 ^{6/}	24 ^{7/}
Անօրգանական և օրգանական նյութեր	1	1	1	4 ^{4/}	12 ^{6/}
Ջրապատրաստման տեխնոլոգիայի հետ կապված ցուցանիշներ	Մնացորդային քլոր, մնացորդային օզոն ոչ պակաս մեկ անգամ մեկ ժամում, մնացած ռեազենտները ոչ պակաս մեկ անգամ հերթափոխի ընթացքում				

Ռադիոլոգիական	1	1	1	1	1
---------------	---	---	---	---	---

1. Ընդունվում է ջրի նմուշների վերցման հետևյալ պարբերականությունը՝

1/ շաբաթը մեկ անգամ, 2/ շաբաթը 3 անգամ, 3/ ամեն օր, 4/ 1 անգամ տարվա եղանակների ընթացքում,

5/ 2 ամիսը մեկ անգամ, 6/ ամիսը 1 անգամ, 7/ ամիսը 2 անգամ:

2. Եթե մինչև 20 հազար մարդու խմելու ջրով ապահովող ստորգետնյա աղբյուրներից սնվող ջրն ուղու ջրըը չի վարակազերծվում, ապա մանրէաբանական և զգայորոշական ցուցանիշներով հետազոտությունները կատարվում են ամիսը 1 անգամից ոչ պակաս:

3. Հեղեղների և արտակարգ իրավիճակների դեպքում անհրաժեշտ է սահմանել խմելու ջրի որակի հսկողության ուժեղացված ռեժիմ՝ ՊՀՀ տեսչության տարածքային կենտրոնի համաձայնությամբ:

Հավելված 8

նշում 10.

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԲԱՇԽԻՉ ՑԱՆՑՈՒՄ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԶԳԱՅՈՐՈՇԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սպասարկվող բնակչության քանակը, հազ. մարդ	Նմուշների քանակը մեկ ամսում
մինչև 10	2
10-20	10
20-50	30
50-100	100
100-ից ավել	100+1 նմուշ, յուրաքանչյուր 5 հազար մարդու համար 100 հազարից ավել բնակչության դեպքում

Նմուշների քանակի մեջ չեն մտնում պարտադիր հսկողական նմուշները, որոնք վերցվում են ցանցի վերանորոգումից կամ այլ տեխնիկական աշխատանքներ կատարելուց հետո:

Ջրամատակարարման ցանցից նմուշառումը կատարվում է փողոցների ջրաբաշխիչ սարքավորումներից, որոնք գտնվում են դրանց ամենաբարձր և փակուղային հատվածներում, ինչպես նաև բոլոր տների ներքին ջրամատակարարման ցանցերի խողովակներից, որոնք ունեն ներմղում և տեղային ջրամղման բակեր:

նշում 10.

Կազմակերպություններ	Թերապևտի (ընտանեկան բժշկի) կողմից զննում	Մաշկավեներաբանի կողմից զննում	Հետազոտությունների պալարախտի հայտնաբերման համար	Արյան հետազոտություն՝ սիֆիլիսի, սուսանակի, տրիխոմոնազի, քլամիդիոզի, ուրեոպլազմոզի (քսուք, քերուկ),	Հետազոտություններ՝ աղիքային վարակիչ հիվանդությունների (մանրէակրություն)	Հետազոտություններ՝ որդակրության հայտնաբերման համար
---------------------	--	-------------------------------	---	--	---	--

				հայտնաբերման համար	ն) հայտնաբերման	
Ջրնուղների կառույցների աշխատողներ, ովքեր անմիջական առընչվում են խմելու ջրի մաքրմանը, վարակազերծմանը և ջրամատակարարման ցանցի սպասարկմանը	-	-	-	-	աշխատանքի ընդունվելիս և հետագայում յուրաքանչյուր կիսամյակը մեկ անգամ	աշխատանքի ընդունվելիս և հետագայում յուրաքանչյուր կիսամյակը մեկ անգամ

Տեսուչի ստորագրությունը _____ Տնտեսվարողի ստորագրությունը _____